

ԳՐԱՐԱՐՈՒՄ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Լ. ՄԿՐՏՁՅԱՆ

Գրաբարում մի շարք բառեր ունեն հոգնակի կազմության առանձնահատկություններ: Քննենք դրանցից մի քանիսը:

Գրաբարում հոգնակերտ է մասնիկից բացի կային նաև այլ մասնիկներ՝ -եան, -եար, -անի, -այլ (-եայլ), -ստան, -ական, -տի(լ), -որայ, -նեար և այլն: Սրանք համարվում են խոսակցական լեզվից և բարբառներից գրական լեզու թափանցած ձևեր, որոնք թեև հավասար հաճախականությամբ չեն գործածվում տարբեր հեղինակների լեզվում, սակայն հանդիպում են համարյա բոլորի մոտ, նաև ընտիր գրաբարով գրված ստեղծագործություններում և թարգմանական գրականության մեջ: «Լիակատար քերականությունում» (հ. 3, էջ 530) վերոհիշյալ մասնիկներով Աճառյանի բերած 46 օրինակներից 31-ը Աստվածաշնչից են, իսկ 15-ը՝ Բուզանդից, Ագաթանգեղոսից և Եղիշեից: Հստ Վ. Առաքելյանի կատարած վիճակագրության՝ -անի-ն կա Կորյունի (1), Ագաթանգեղոսի (7), Բուզանդի (18), Մակարայեցիների (7) մոտ<sup>1</sup>, Նույն մասնիկը Խորենացին ոչ մի անգամ չի գործածել: Վ. Առաքելյանի համոզմամբ «եթև բոլոր հեղինակները -անի մասնիկը կիրառեին, մենք կհամարեինք հիշյալ բառերին հատուկ հոգնակիացուցիչ մասնիկ, բայց այն հանգամանքը, որ դա հատուկ է մի փոքր խումբ գրվածքների, ապա նշանակում է, որ դա բարբառային փոխանցում է»<sup>2</sup>:

Հստ Մեյեի դասական հայերենի հավաքականներն իսկական հավաքականներ են, քանի որ իրոք արտահայտում են ամբողջություններ «և հոգնակի արտահայտող կողմնակի ձևեր չեն, այս ամենի պատճառով էլ նրանք փոքրաթիվ են»<sup>3</sup>:

Բոլոր հայագետները հավաքական մասնիկների հնությունը հասցնում են լեզվի խորքերը՝ գտնելով, որ նրանց առկայությունը լեզվում հնագույն երկվույթ է: Պեղերսենը դրանք համարում է այնպիսի հոգնակիակերտներ, որոնք «եզակի հավաքականաց ձև ունին»: Թեև այս հոգնակիակերտներով կազմությունները «հին հայերենին մեջ կղզիացած են», սակայն «հոգնակիի փոխարենն եզակի հավաքականներ գործածելը հին հայերենի մեջ խոր արմատներ ունի»<sup>4</sup>: Այսպես, մարդիկ բառը Պեղերսենը համարում է մարդ բառի եզակի հավաքական՝ իբրև հոգնակի, իսկ մարդկան ձևը, ըստ նրա, հիշեցնում է սկանդինավերենի siskin, maethgin, feθgin ձևերը: Պեղերսենը նաև նշում է, որ գոյականի սկզբնական, պարզ ձևը ևս կարող է հավաքական լինել և այդտեղից էլ հոգնակի գործածվել. օրինակ՝ ծառ, ու վկայակոչում է Այտընյանին

<sup>1</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981, էջ 84:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 824:

<sup>4</sup> Հ. Պեղերսեն, Հայերենը և դրացի լեզուները, «Հանդես ամսօրեայ», 1906, էջ 279:

(բազում պտուղ, բազում ինչ)՝: Ընդհանրապես այս երևույթը (եզակին իբրև հոգնակի գործածելը) հատուկ է լեզուներին. այսպես, жемчуг եզակին գործածվում է մարգարիտներ հիմաստով, իսկ հավաքական жемчужина-ն՝ մարգարիտ: Պեղերսներ վկայակոչում է նաև Շմիդտին, որը շեզո՞ գոյականների հոգնակի կազմության մասին իր գրքում օրինակներ է բերում հոգնակի հիմաստով գործածվող հավաքականներ, որոնք գոյականի պարզ, սկզբնական ձևերն են (գերմաներեն, սլավոներեն) և նույնիսկ հոգնակի հոլովում են ընդունում: Իբրև նման օրինակ Պեղերսներ բերում է հայերենում կանայ-է, կանա(ն)-ց ձևերը:

Սովորական հոգնակին և հավաքականը միմյանցից տարբերվում են հոլովման մեջ. հավաքականը հոլովվում է եզակիի ձևով: Հոգնակին և հավաքականը տեսականորեն են զանազանվում, գործնականում՝ ոչ (Պեղերսեն): Հնդեվրոպական \*s հոգնակերտը կարող է գործածվել ոչ միայն հոգնակի, այլև հավաքական հիմաստով. ուղղակի այստեղ կար համաձայնության խընդիրը ածականների, դերանունների և բայաձևերի հետ: Անհամաձայնությունը գալիս է հիմք լեզվից, վերջինիս համաձայնության ոչ կատարյալ դրությունից, որը գրաբարում խարխլվելով՝ հայերենի մյուս շրջաններում դադարում է գործելուց (խոսքը վերաբերում է ածականների և դերանունների հետ գոյականի համաձայնությանը): Արդի հայերենում նրա վերացումը Պեղերսներ համարում է հաջող ելք համաձայնության «անլուծանելի խառնակութենեն»։ Հոգնակին և հավաքականները համարժեք են դառնում: Դեռևս երկձև հոգնակիներից (սովորական հոգնակի՝ -է և հավաքական՝ -եաւ, -ան, -անի և այլն) հավաքականի գործածությունը գերադասելի էր՝ համաձայնության դժվարություններից խուսափելու համար, քանի որ հավաքական մասնիկներով գոյականի հետ որոշիչը և բայը դրվում էին եզակի թվով:

-է, -եաւ

-եաւ հավաքականը համարվում է հնատիպ ածանց՝ հոգնակիակերտին զուգահեռ, սաղմնավորված լեզվի ամենավաղ վիճակում. Զահուկյանը -եաւ-ը դնում է հնագույն հայերենում վաղնջա՝այերենի ածանցների և նույնիսկ վերջավորությունների հիման վրա կազմված հիմնական ածանցների մեջ՝: Գործածության հնագույն տարածքը թերևս կենտրոնական շրջաններն են, թեև հնարավոր չէ ստույգ որոշել. դեռևս հնուց էլ ունեցել է -եւ տարբերակը՝ եա>է փոփոխության հետևանքով, զրվել է ինչպես բնիկ, այնպես էլ իրանական և անհայտ ծագման բառերի վրա. բանեար, որեար (աւրեար), վարժեար, բարձկնեար (վերջինիս համար ենթադրվում է ոնգայինով ձև՝ բարձիկն, ուստի ընդունելի չէ բարձկնեար-ի միջոցով հնագույն -նեաւ (ապա՝ ներ) ածանցի գոյության վարկածը)՝:

Մեյեն ընդհանրապես բացասում է բարձկնեար, նաւակնեար, քաղաքեանեար ձևերի գոյությունը 5-րդ դարում<sup>5</sup>, ու թեև Այտընյանը բերում է հոգնակի նման ձևերի բավական երկար ցուցակ<sup>6</sup>, Մեյեի կարծիքով նա էլ է կասկածում: Իհարկե, այն ժամանակ քննական ընդգրկող չլինելու պատճառով (քաջատեղյակ չենք Ս—Թ դարերում հայկական ձևագրերի կրած փոփո-

<sup>5</sup> Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականութիւն արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 477:

<sup>6</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987 թ., էջ 353:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 375:

<sup>8</sup> Տե՛ս Ա. Մեյե, Նշվ. աշխատ., էջ 396:

<sup>9</sup> Տե՛ս Ա. Այտընյան, Նշվ. աշխատ., էջ 76:

խություններեն»)<sup>10</sup>, Մեյեի նման խստապահանջ և զգույշ գիտնականի թերահավատությունը կարելի է հասկանալ, բայց այնուամենայնիվ նման մերժումը շատ կտրուկ. հավաքականները գործածվում են որոշ հեղինակների լեզվում շատ, ոմանց մոտ՝ քիչ կամ հազվագեպ, բայց նրանք կային, ունեին իրենց որոշակի գործածության սահմանները և ընդգրկում էին բառերի որոշակի խումբ, որի մասին կիսովի ստորև:

Ակադ. Զահուկյանը սրանք համարում է խոսակցական լեզվին հատուկ ձևեր, սրանից բացի պետք է նկատի ունենալ հայերենում -կն հիմք ունեցող բառերի բավական մեծ թիվը: Հնդեվրոպական -\*k<sup>o</sup>lon ածանցը հայերենում այլևայլ արտահայտություններ ունի. արմուկն, կրուկն, դիակն, աղջիկն, ծաղիկն և այլն, հետագայում -ն-ի անկումով՝ աղջիկ, մանուկ, ծաղիկ և այլն: «Հավանաբար այս կարգի բառերի հետ բաղարկվելով հետագայում լայն տարածում են ստանում իրանական -իկ, -ուկ-ով փոքրացուցիչ-փաղաքշական ածանցները: Այս -կն-ը պահպանվել է նաև նալկնեառ հավաքական-հոգնակի ձևի մեջ»<sup>11</sup>:

-եառ-ի ծագման մասին. Պեղերսերը կապում է -\*ro մասնիկի հետ, իսկ -ե-ն կապում է հայերեն ի-ի հետ. -եառ-ով հոգնակի ունեին ի հոլովման բառերը (բանեար, վանեար): Բուզգեն այն փոխառություն է համարում կովկասյան լեզուներից և համեմատում է շեչեներենի, ուտիերենի, թուշերենի ar, er, ir, ur հոգնակերտների, էտրուսկերենի er-ի հետ և այլն:

Ըստ ԱՃառյանի հնդկական դիլգիտի-շինա լեզուն, տունգուսերենը, դրավիդյան լեզուները հոգնակին կազմում են ar, or, ir, ur մասնիկներով: Նա նույնպիսի օրինակներ է բերում նաև հնդեվրոպական լեզուներից (շվեդերեն, գեզմաներեն, լատիներեն), ուր վերջավորությունների փոփոխման հետևանքով շատ բառերի հոգնակին սկսում է կազմվել er-ով: Սակայն հայերենի -եառ հոգնակերտի նմանությունն այս լեզուներին ԱՃառյանը համարում է պատահական<sup>12</sup>:

Գ. Զահուկյանի կարծիքով վերոհիշյալ փաստերի կողքով չպետք է անտարբեր անցնել: Այն, որ գերմաներեն -er հոգնակերտը ծագել է -es-ից՝ ոտտացումով, թեկուզ և դժվար ասլացուցելի, -s-ի ոտտացումը (հմմտ. սեռ. -\*osjo և հունաբան դպրոցի -ոյր)<sup>13</sup> կարող է հավանական լինել նաև հայերենի համար. այստեղ ենթադրվում է հնդեվրոպական մի այլ շերտի առկայություն: Պետք է հաշվի առնել հայերենում դեռևս հնագույն շրջանից սկսած -ro ածանցի տարբեր արտահայտությունների և աստիճանական տարածվածության իրողությունը. դասական թվականների -իւր (երկիր, չորիր), -բառդ, -երոռդ (երկրորդ, հինգերորդ), բայածանցների՝ -աւր (մեծար-ել), կամ պալար, գալար և այլն. ուրեմն հավանական է նաև հին հայերենի մեջ նրա արտահայտությունը (բանեար, իշեար, որեար— մարդիկ)՝ իմաստային անցմամբ:

Ինչ վերաբերում է որեառ ձևին, Մեյեն այն համարում է հազվագեպ բառ դասական հեղինակների մոտ. «Ավետարանի թարգմանությունը բոլորովին անգիտանում է այն, իսկ հայերեն Աստվածաշնչի մեծ համաբարբառը միայն երեք օրինակ է տալիս՝ երեքն էլ Մենզոց գրքում, որտեղ որեառ-ով թարգ-

<sup>10</sup> Ա. Մեյե, Նշվ. աշխատ., էջ 396:

<sup>11</sup> Գ. Զահուկյան, Նշվ. աշխատ., էջ 288:

<sup>12</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 1957, Բ. 3, էջ 710:

<sup>13</sup> Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխտեմը և Արա ծագումը, Երևան, 1959, էջ 281:

մանվում է *οί ανθραποι-ն*, «այս մարդիկ»։ Աստվածաշնչի ոչ մի օրինակ ջարդ չի նշվել<sup>14</sup>։ Ազաթանգեղոսի վկայությունը Մեյեն համարում է կասկածելի, Փարպեցու մոտ գործածված աւագոբեար, ազատանի, աւագանի և այլ ձևեր, որոնք նշում է Կարստը, նույնպես համարում է կասկածելի (Փարպեցու հին բնագիրը 1672 թվից է)։ Այնուամենայնիվ, որեւէ համարում է հետաքրքրական ձև. «-եար վերջահանգով միակ բառն է, որի գոյությունը դասական հայերենի շրջանում հավաստված է թվում, բայց նրանում -եար տարրը վստահորեն չի կարելի առանձնացնել, քանի որ որ- արմատական տարրը չի հանդիպում հայերենում, և նրա իմաստը հայտնի չէ»<sup>15</sup>։

Ըստ Պեղեբրսենի որեւէ բառը եղակի շունի, այն կապվում է որ հարցական դերանվան հետ։ -Ար-ը նախապես եղել է հավաքական ածանց. օրինակ է բերում ոչխար բառը, որն սկզբում ունեցել է հավաքական նշանակություն։ Պեղեբրսենը գտնում է, որ հայերեն բառը կազմված է հայեար+են մասերից։ Այս ածանցը նույն նշանակությունն ունի նաև հունարենում (վկայակոչում է Հյուրշմանին, Բուզգեին)<sup>16</sup>։

Պեղեբրսենի կարծիքին ծանոթանալուց հետո Բաղրուպանյանը հայտնում է, որ ինքն ունի նոր կարծիք. ըստ այդմ դա հնդեվրոպական \*orior-es բառն է՝ սերունդ, ծնունդ նշանակությամբ՝ կազմված \*e/or (կենդանի շարժումն, մեծանալ, աճել) արմատից. հանդիպում է լատիներենում orior, oriri, ortus և այլն. հառնել, ամբառնալ, վերանալ, ծնանիլ, ծագել, էլանել, հառաջ գնալ. կամ ortus՝ ծագումն, ելք, origer՝ սկզբնավորություն, ծնունդ, սկիզբն, ումբը, կանուխ, առավոտ և այլն։ Որ դերանվան հետ կապելը Բաղրուպանյանը համարում է ժողովրդական ստուգաբանության արդյունք (հմմտ. իրեար)<sup>17</sup>։

Այս բառը Հայկազյան բառարանում (հ. 2, էջ 530) նշվում է հետևյալ կերպ. Որեար, որերոյ կամ -հարոյ, -ով և որեարք. գոյական, որպէս թէ Որբ, ոյբ, կամ Արք (իրբ այրեար). մարդիկն այն։ Բերվում է 26 օրինակ՝ մեծ մասամբ ուղիղ, երբեմն էլ հոլովված ձևերով, կա նաև որեարս ձևը (2 անգամ). բառի նշանակությունը այն է, ինչ տրված է բացատրության մեջ. իբրև որոշիչ գործածվում են մեծամեծ, սխալելի և այլ ածականները։ Ընթացել է յառաջ նախարարագունդ որերոյն. Սքանչելի և մեծամեծ որեարն. Զառաքինի որեարս. Զաւագ որեարոյն. Այլընտիր որեարն. զԱրշակունեացն տոհմի որեարս և այլն։ Բայց կա նաև՝ Որեար աւագակ և անպիտան՝ հացկատակք և վատատոհմիկ։ Կա ոմանց այն կարծիքը, թե որեար նշանակում է ազնվատոհմ մարդիկ, իշխանավորներ (վերջին օրինակը կասկածի տեղիք է տալիս)։

Հայկազյան բառարանում կա այս բառի նաև բաղադրյալ ձևը՝ հայորեար (-որերոյ). բացատրվում է (հ. 2, էջ 32) հայ մարդիկ. արք ազնուականք ի հայոց. օրինակները բերված են Փարպեցուց։

Այտընյանը -եար-ով գործածվող բառերի մեջ որեար-ն առանձնացնում է իբրև ամենաշատ գործածվողը (հատկապես Փարպեցու լեզվում)։

-եար մասնիկով հավաքական հոգնակի նշանակությամբ բառերի համար կարելի է առանձնացնել հետևյալ հատկանիշները.

1. մեծ մասամբ միավանկ կամ երկվանկ են. բան-բանեար, հայ-հայեար, հող-հողեար.

<sup>14</sup> Ա. Մեյե, Նշվ. աշխատ., էջ 395։

<sup>15</sup> Մույն տեղում, էջ 395։

<sup>16</sup> Տե՛ս Հ. Պեղեբրսեն, Հայերենը և դրացի լեզուները, էջ 279։

<sup>17</sup> Տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1906, էջ 55։

2. ունեն -ակ, -ուկ փոքրացուցիչ մասնիկները. բարձիկ-բարձկնեար, նա-լակ-նալակնեար, քաղաքիկ-քաղաքկնեար.
3. որոշ բայահիմքերից կազմված բայանուններ. վարժ-եար.
4. որոշ անեզականներ, որոնց հոգնակին հաճախ հստակեցման կարիք ունի. վան(ք)-եար:

### Դուռն > դուրֆ > դուռնֆ

\*Dhuer (\*dhwer), \*dhur ձևով այս բառը մտնում է ընդհանուր հընդ-եվրոպական արմատների մեջ՝ ներքին կյանքի գործունեությունն արտահայտող այլևայլ բառերի հետ, նշվում է բոլոր հնդեվրոպաբանների մոտ: Հընդ-եվրոպական ձևի կողքին հայերեն համարժեքն է դուռն, հոգն. դուրֆ: Դուր եզակիի և դուռնֆ հոգնակիի մասին հիշատակություն չկա: Ուշագրություն է դարձված բառի իմաստի վրա՝ dhuer, dhur = դուռն (հոգն.՝ դուրք): Դուռն նշվում է ոչ թե նախահայերենում (կամ վաղնշահայերենում) գոյություն ունեցած ձև, այլ \*dhuer (dhwer)-ի՝ հայերենում համապատասխան իմաստն արտահայտող ձև, իսկական համարժեքը դուրֆ-ն է՝ երկակի և հոգնակի նշանակությամբ: Բոլոր լեզվաբաններն էլ ուշագրություն են դարձրել dhuer-ի արտահայտած իմաստի վրա՝ դուռն, նաև՝ բակ, սեմական լեզուներում՝ ցանկապատ, ցանկապատված բակ:

Բառը նախահայերենում ունեցե՞լ է եզակի, թե՞ ոչ, հետաքրքրել է շատ լեզվաբանների՝ Հյուբերման, Օստհոֆ, Մեյե, Աճառյան, Զահուկյան, Պետրոսյան: Ինչպես հավաստում է Մեյեն<sup>18</sup>, ըստ Օստհոֆի այս բառը հնդեվրոպական հիմք լեզվում եզակի ձև չի ունեցել և միշտ գործածվել է հոգնակի թվով (համեմատում է վեդ. durah, հ. սլվ. dviri, լիտ. dūras, հ. վ. գերմ. turi, լատ. fores): Բայց քանի որ հայերենը հիմք լեզվից անջատվելուց հետո շատ ձևափոխությունների է ենթարկվել, սկսում է երևան գալ նաև այդ բառի եզակին՝ դուռն, որը պետք է առաջացած լինի \*dhurn ձևից: Սրան համապատասխան հոգնակի դուռնֆ ձևը նորագոյացություն է, որը զուգահեռաբար գործածվել է դուրֆ հոգնակիի կողքին: Մեյեն գտնում է, որ հնդեվրոպական լեզվի մի շարք անեզականներ հայերենում ձեռք են բերել եզակի ձևեր՝ \*ո հիմքով. ոտք > ոտն, ձեռք > ձեռն և այլն: Մյուս կողմից հայերենը հնդեվրոպական \*ո-ով ընգայնազուրկ հիմքերի դիմաց ունի -ն-ով հիմքեր<sup>19</sup>. չեւօ—ամառն, հ. ր. գերմ. sumar—ամառն և այլն, ուստի և համապատասխանաբար dhwer-ը հայերենում տվել է դուռն:

Ըստ Հ. Աճառյանի այս բառերն (ոտն, ձեռ, դուռն և այլն) ընտրել են \*ո բունն այն պատճառով, որ այն հայերենում կենսունակ էր մյուս բաղաձայնահանգ բների համեմատությամբ, որոնք ջնջվել էին ինչպես հայերենում, նույնպես և այլ լեզուներում, մինչդեռ «\*ո բունը մնում է և մինչև իսկ իբր կաղապար է ծառայել հայերենի մեջ, և ահագին թվով բառեր կազմվել են նրա օրինակով»<sup>20</sup>:

Ն ձայնորդահանգ հոլովման պահպանումը հայերենում կարևոր նշանակություն ունի իբրև «մի շատ հնավիճակ երևույթ», որը «ներկայացնում է հնդեվրոպական ձայնորդի դրությունը և այնքան հավատարմությամբ, որ մինչև իսկ գերազանցում է հունարեն և մյուս լեզուներին»<sup>21</sup>:

<sup>18</sup> Տե՛ս Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 264:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 296:

<sup>20</sup> Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 3, էջ 418:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 414:

Դուրժ անեզականը երկակիի քերականական կարգի անհետացման հետ այդ նշանակությամբ շարժածակու հետևանքով փոխարինվել է դուռն, դուռնի՝ ձևերով, բայց և լեզվից լիովին դուրս չի եկել և շարունակել է նոր ձևերին զուգահեռ գործածվել իբրև սովորական հոգնակի, ստեղծել հոգնակի զուգա-ձևություն: Հայկազյան բառարանում դուռն բառի հոգնակին նշված է՝ դր-րունք կամ դուրք: հոգնակի թեք ձևերը՝ դրանց, դրաց, ի դրունս, առ դուրս, զդրունս, զդուրս, դրամբք, դրօք: Բերված օրինակների մեջ հոգնակի թվով դրվածները դուռնի-ի ուղիղ և թեք ձևերով են: Դուրժ-ով ձևերը քիչ են: Դուրժ-ը Հայկազյան բառարանում դրված է նաև իբրև առանձին բառ. «Դուրք, դրաց, առ դուրս, ի դուրս: Տե՛ս Դուռն» (Տ. 1, 640):

Գ. Զահուկյանը դուռնի-ը համարում է դուռն բառի կանոնավոր հոգնակին, իսկ դուրք-ը՝ երկակիի մնացորդ<sup>22</sup>:

Հր. Պետրոսյանը գտնում է, որ դուրժ նախնական անեզական ձևը ոչ միայն իր իմաստաբանական ուրույն երանգավորումով է առանձնացել եզակի-հոգնակի հարաբերակցությունից, այլև իր կառուցվածքով, քանի որ այն պահանջում է հնագույն դուր արմատը և թեք հոլովածներում ևս (դրաց, զդուրս, դրօք) հեռանում է դուռն-դրունք հարաբերակցությունից<sup>23</sup>:

Որոշ լեզվաբաններ կարծում են, որ այս երկու ձևերն ունեն իմաստային տարբերություններ: Ըստ Ա. Այտրեյանի դուրժ նշանակում է դրսի դուռ<sup>24</sup>, Մեյեն համամիտ է Այտրեյանի հետ, միաժամանակ գտնում է, որ դուրժ ձևը հաճախ ունի եզակիի արժեք, ինչպես դուռն ձևը: Վերջինս ըստ Մեյեի «հաճախագույն է և նշանակում է դուռ՝ իմաստային բոլոր հնարավոր նրբերանգներով, մինչդեռ դուռնի-ը, մեզ թվում է, միայն մեծ դռների համար է գործածվում, և դա անշուշտ հայերենի նորագոյացությունն է»<sup>25</sup>:

Աճառյանն «Արմատական բառարանում» (էջ 684) դուռն (դրան, դրամբ, դրունք, դրանց, դրամբք) բառի համար նշում է հետևյալ նշանակությունները. կիրճ, լեռների մեջ անցք (որ և կոչվում է պահակ) (Ս. գիրք, Ոսկերեան, Եվսեբիոս Պատմիչ), պալատ (Եղիշե, Խորենացի), ապա նշում է դուռն արմատով բաղադրված ձևերը՝ դռնապան, դռնափակ և այլն: Դուրժ-ը համարում է երկրորդ ձև՝ անեզական գործածությամբ (դուրք, դրաց, դուրս, դրօք) ունի պալատ և դուրս, արտա՛ս նշանակությունները, որոնք ունեն և այլ լեզուներ. դուռն արեւնի (Տ. սյարսի.), ռուս. дверь և дворец (դուռ և պալատ) և այլն: Այս նույն նշանակություններն ունի դարպաս (նախապես՝ դարապաս) բառը, որը համապատասխանաբար նույն նշանակություններն ունի պարսկերենում, ասորերենում, արաբերենում և այլն: Հայերենում կա նույնիսկ դարպասցի բառը՝ պալատական նշանակությամբ (էջ 64):

Արգի հայերենի բացատրական բառարաններում դուրժ-ը առաջին նշանակությամբ դուռնի-ի գրաբարյան հոգնակին է, իսկ երկրորդ նշանակությամբ (հնացած նշումով)՝ դարպաս: Արուբի դուրժ բառսույն նիգով իրենց հետևուց պինդ գոցեցին (Ավ. Իսահակյան):

## Կին—կանայք

Կին բառի ծագման և հոգնակի զուգահեռ ձևերի քննությամբ զբաղվել են Թե հայ, Թե օտարազգի հայագետներ:

<sup>22</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, Նշվ. աշխ., էջ 240:

<sup>23</sup> Տե՛ս Հր. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 92:

<sup>24</sup> Տե՛ս Վ. Զալիշեան, Քերականություն հայկազեան լեզուի, հանդերձ փոփոխմամբք և յանկուածովք, աշխատասիրեալ ի Ա. Այտրեյան, Վիեննա, 1885, էջ 141:

<sup>25</sup> Ա. Մեյե, Նշվ. աշխ., էջ 405:

Ըստ դանիացի հայագետ Պեդերսենի՝ կանայք, կանանց, կանայս, կանամբք ձևերն ալիքի ուշ շրջանի արդյունք են: Նախապես գոյություն է ունեցել կանայ հավաքականը, որից էլ *Կ*-ի հավելմամբ՝ կանայք: Պեդերսենը ենթադրում է կին բառի մի այլ հավաքական ևս՝ կանան (սրանից էլ կանանի ձևը) և իբրև հաստատում բերում է -ան հավաքական մասնիկով այլ բառեր՝ իշ-ան, ձի-ան, հաւ-ան<sup>26</sup>: Հոգնակի գործիականի կանամբք ձևը կանան հավաքականի եզակի գործիականն է՝ -ի հավելմամբ. կանան + բ + բ: Կին բառի նախնական ձևը կեն-ն է՝ ոնգական ն-ից առաջ և >ի փոփոխություն: Հոգնակի կան հիմքը ըստ Պեդերսենի հնդեվրոպական ձայնավորների համար սովորական ձևափոխություն է. հմմտ. իռլանդերենում *ben*—կին, *ban*—կանանց: Հայերենում կանանց ձևի առաջին վանկի ա-ն (կան) ներդաշնակության արդյունք է: Պեդերսենը գտնում է, որ կին բառը նախապես հավաքական նշանակությամբ է գործածվել՝ առանց եղակիի, որ ընդհանրապես հայերենում եղակի հավաքականներն իբրև հոգնակի գործածելը խոր արմատներ ունի: Նա վկայակոչում է Շմիդտին, ըստ որի հոգնակիի իմաստով գործածվող հավաքականները գոյականի պարզ, սկզբնական ձևերն են և նույնիսկ հոգնակի հոլովում են լնդունում:

Մեյեն հայերենում, նույնպես և հունարենում, կին բառը համարում է հոլովման ամենաանկանոն լռաբրից մեկը և հավաստում, որ հնդեվրոպական սկզբնաձևն էլ է այդպիսին եղել: Նա բննադատում է Կարստին կին-ը հնդեվրոպական շհամարելու հարցում, քանի որ վերջինս իր հատուկ թեքմամբ և անկանոնություններով «այնքան հստակորեն հնդեվրոպական է»<sup>27</sup>:

Հոգնակի կան հիմքի ա-ի մասին: Այն, որ հնդեվրոպական օ-ն հայերենում մերթ ո է մնում, մերթ ա դառնում, որոշ լեզվաբանների (Սոսյուր, Բարթոլոմե)<sup>28</sup> ենթադրել է սալիս, որ պահպանվում է e-ի ձայնդարձ օ-ն, իսկ մի այլ օ՝ օ, դառնում է ա: Մեյեն հավելած չէ հնդեվրոպական օ-ի զարգացման այս երկու տարբերակները համարել հնդեվրոպական, քանի որ իրողությունը բացատրվում է հայերենին հատուկ օրինքներով. ո-ն ր և ղ ձայնորդներից առաջ կանոնավորապես մնում է ո, և սա համարյա ընդհանուր օրենք է փակ վանկի համար՝ որոշ բացառություններով: Ն ձայնորդով վերջացող փակ վանկի ո > ա փոխակերպման օրինակների մեջ (*եւթն* > *եւթանասուն*) Մեյեն գնում է և կանայք հոգնակի ուղղականը՝ \*g<sup>o</sup>nas հետևյալ նկատողությամբ. «եթե կ-ի և ն-ի միջև ա-ն հին լիներ, վերջավորության ա-ն չէր կարող պահպանվել», ուրեմն կան ձևի ա-ն հետին երևույթ է:

Կանանի ձևը Մեյեն ևս համարում է հավաքական հոգնակի («կանանց ամբողջությունը»), վկայակոչում է Ագաթանգեղոսին (8, 726) և Բուզանդին (5, ԽԳ), որոնց պատմություններում «հավաքական շատ հստակ իմաստով երկու օրինակ ունենք»<sup>29</sup>: Ագաթանգեղոսից. ... մատուցեալ իշխանքն թագաւորան և նախարարօքն և խառնիճաղանճ ամբօխին հանդերձ, նա և կանանույն ժողովեալ մատաղ մանկովն անմեղօք երամ երամ և դասադասեալք անկանէին առաջի սրբոյն Գրիգորի:

Կին բառի ստույգ նախածեր դժվարանում է որոշել նաև Աճառյանը, թեև հայտնի է նախալեզվում նրա g<sup>w</sup>-en, g<sup>w</sup>-ē-ñ, g<sup>w</sup>-n, g<sup>w</sup>օ-n ձայնդարձները, որոնք որոշ փոփոխություններով երևան են գալիս հին պրուսերենում, հին իռլանդերենում, առաիկյան բարբառում, ինչպես նաև հայերենում: Գործիա-

<sup>26</sup> Տե՛ս Հ. Պեդերսեն, Հայերէնը և դրացի լեզուները, էջ 108:

<sup>27</sup> Տե՛ս Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, էջ 608:

<sup>28</sup> Տե՛ս Աուլն տեղը, էջ 234:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 397:

կանի կնաւ և հոգնակի սեռականի կանաց ձևերը Աճառչանը համարում է հնագույն, որոնք ավելի ուշ շրջանում առն բառի թեք ձևերի նմանաբանութիւնը դարձել են կանամբ, կանանց և այլն:

Ընդհանրապես հոգնակի կազմութեան առանձնահատկութիւնները քրննելիս Աճառչանը նկատում է մի երևույթ. որոշ լեզուներում հանդիպում են փոխադարձ, իրար նշանակութեամբ նախամասնիկով և հոգնակերտ մասնիկով կազմված հավաքական այնպիսի բառեր, որոնք ցույց են տալիս իրար հետ կապ ունեցող անձերի գումարը: Այսպես՝ փոխքեր նշանակում է բոլոր քույրերը միասին, նրանց խումբը: Միաժամանակ Աճառչանը նշում է, որ այս երևույթը հատուկ է միայն անձ, ընտանիք կամ ազգական ցույց տվող բառերին՝ քույր, եղբայր, հորեղբորորդիք և այլն<sup>80</sup>: Թերևս կարելի է եզրակացնել, որ կին բառի հավաքական կանանի ձևը այդ նշանակութեամբ է գործածվել, իսկ կանայք հոգնակին մի փոքր ավելի ուշ շրջանի արդյունք է:

Ակադ. Զահուկյանը կարծում է, որ հնդեվրոպական մի շարք լեզուներում կին բառի արմատի առկա ձևերը թույլ են տալիս այս բառի կրած փոփոխութիւնները բացատրել «հաջորդող ածանցի ձայնավորման բնույթով»: Նա հետևյալ կերպ է բացատրում կանայք-ի արմատում և ածանցում ա-ի առկայութիւնը. «հոգնակի ուղղականի կան (-այ-ք)-ի ա ձայնավորումը գալիս է հնդեվրոպական \*g<sup>w</sup>oŋ — (ā-ից) \*o-ն հայերենում տալիս է ա և տարածվել է հոգնակի այլ հոլովածների վրա. կանամբ ձևի (կնաւ-ի կողքին) -ամբ-ի ա-ն արդյունք էր հոգնակի գործիականի և և հիմքով այլ բառերի գործիականի ազդեցութեան», իսկ -այ-ք-ի -այ-ը «լիակատար զուգահեռ ունի հունարեն հոգնակի ուղղական γυναικας ձևի մեջ»<sup>81</sup>: Զահուկյանն ա տարրը համարում է իզականի ցուցիչ, որն ուղղական-հայցականում ընկել է և հետագայում գոյականի սեռի քերականական կարգի վերացման պատճառով մնացած թեք հոլովներում (կանամբ, կանանց և այլն) դադարել է որպես այդպիսին գիտակցվելուց: Կանայք-ի -այք-ը ըստ Զահուկյանի հավաքական հոգնակի է արտահայտում, որը նմանաբանութեամբ անցել է նաև աղախին բառին. աղախնայք (աղախնեայք). «այս -այք (-եայք) մասնիկը, -անք-ի կողքին, հին հայերենում հանդես էր գալիս որպես հավաքական մասնիկ (հմմտ. Հայաստանեայք—Հայաստանեայց, Վարդանանք, Վարդանանց ձևերի կողքին)»<sup>82</sup>:

**Э. Л. МКРТЧЯН — Об особенностях образования множественного числа в грабаре.** — В статье на основе теоретического и богатого фактического материала рассматривается несколько особенностей образования множественности в древнеармянском языке. Внимание автора сосредоточено, в частности, на собирательной частице множественного *-հար*, пределах ее функционирования в армянском. Исследуются также представляющие интерес с точки зрения образования множественного формы (*կին* > *կանայք*) и имеющие параллельные формы множественного слова (*դուռն* > *դրուներ* > *դուրք*) и т. д.

<sup>80</sup> Տե՛ս Հր. Աճառչան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Բ. 3, էջ 295:

<sup>81</sup> Փ. Զահուկյան, Հին հայերենի հոլովման սխեմանը և նրա ծագումը, էջ 182:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 264: